Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ՀՈՒՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 մարտի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն. յԱստուծոյ
ո՛չ երկնչէր եւ ի մարդկանէ ո՛չ ամաչէր»
(Ղուկ. ԺԸ. 2)։

Սիրելի՛ զավակներ Հայոց Եկեղեցու,

Մեծ պահքի ապաշխարության եւ ինքնաքննության այս շրջանում բոլորիս հայացքն ուղղված է Աստծուն եւ մեր ներքին կյանքին, քանզի մեծ ցանկություն ունենք մեղքերից ձերբազատվելու, հոգով զորանալու եւ Քրիստոսով նոր մարդ դառնալու։ Մենք քաջ գիտակցում ենք նաեւ մեր մեղավոր ու տկար լինելը, բայց միեւնույն ժամանակ հասկանում, որ հզոր եւ անպարտելի ենք միայն Աստծու օգնականությամբ եւ Նրա սուրբ կամքով։ Չնայած այս պահին եկեղեցում ցուրտ է, բայց ջերմ են մեր հոգիներն ու սրտերը, որովհետեւ դրանց ջերմացնողն Աստված Ինքն է, որի նախախնամության ներքո ենք ամենքս։ Այսօր Մեծ պահքի 5-րդ կիրակին է, որ անվանում ենք նաեւ «Դատավորի» կիրակի՝ նկատի ունենալով Ղուկասի Ավետարանում զետեղված անիրավ դատավորի եւ այրի կնոջ առակը։

Սիրելինե՛ր, ընդհանրապես Տիրոջ պատմած առակների հասցեատերերը տարբեր են՝ մաքսավորներ, փարիսեցիներ, դպիրներ, աշակերտներ եւ ուրիշներ։ Հիսուս առակների միջոցով ցանկանում էր ավելի հասկանալի դարձնել այս կամ այն միտքն ու գաղափարը՝ դրանցից բխեցնելով նաեւ բարոյախրատական պատգամը։ Եւ Տերն այս առակը հատուկ պատմում է Իր աշակերտներին։ Այլ խոսքով՝ այն ուղղված է քրիստոնյաներիս՝ Իր աշակերտներին, որոնք սիրով, պատասխանատվությամբ եւ համբերությամբ վերցնում են խաչը եւ հետեւում Տիրոջը՝ մշտապես

հիշելով աշակերտ լինելու գլխավոր պայմանը՝ միմյանց հանդեպ սերը. «Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը կիմանան, որ դուք Իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ. 34–35)։ Հիսուս աշակերտներին նախ հորդորում է ամեն ժամ եւ անձանձրույթ աղոթել, ապա հենց մարդկանց կյանքից վերցված մի առակ պատմում։

Առակի գործող անձինք երկուսն են՝ քաղաքային մի դատավոր եւ այրի մի կին։ Տերը շատ դիպուկ բնորոշում է դատավորին. «Աստծուց չէր վախենում եւ մարդկանցից չէր ամաչում»։ Իշխանություն ունեցողների, առակի դեպքում՝ դատավորի այս տեսակը տարածված է եղել ե՛ւ հնում, ե՛ւ այսօր։ Երբեմն կյանքում իսկապես պատահում է, որ մարդ անաստված է լինում, բայց գոնե առերես մարդկանցից ամաչում է։ Սակայն այստեղ Քրիստոս երկու բնորոշումներով տալիս է անկյալ եւ անիրավ մարդ-դատավորի խտացված պատկերը, որն անտարբեր է ուրիշի ցավի նկատմամբ եւ անպատկառ։ Նմանների համար շահագրգռող հանգամանքը գումարն է, անձնական բարեկեցությունը, հարմարավետությունը, մարդկանց վրա իշխանության գործադրումը եւ այլն։ Ծիծաղելի կլինի մտածել, որ այս տեսակը կարող է մտածել ոչ միայն երկնային, այլեւ երկրային արդարադատության մասին։ Այդպիսիների համար Աստված, ընկերներ, բարեկամներ չկան, այլ միայն իշխանություն, որից պետք է հնարավորինս օգուտ քաղել։ Իշխանավորի այս տեսակը մեծ ուշադրություն է դարձնում նաեւ իր կյանքի հարմարավետությանը, որ հանկարծ չլինի՝ այն խախտվի։

Մենք ոչ թե վախենում ենք Աստծուց, սիրելի՛ հավատացյալներ, այլ երկյուղում։ Ըստ Ս. Եղիշե վարդապետի՝ վախը թերահավատության նշան է, մինչդեռ երկյուղն իմաստության սկիզբն է՝ ըստ Աստծու խոսքի։ Ինչպե՞ս կարող ենք վախենալ այն Աստծուց, որ հանուն մեր փրկության մարդ դարձավ, Իր անգին արյունը թափեց խաչի վրա։ Չէ՞ որ առ Աստված երկյուղն է մեզ հետ պահում մեղանչելուց, իսկ մեղքեր գործելիս էլ ցույց տալիս ապաշխարության ճշմարիտ ճանապարհը։ Ուրեմն այստեղ մենք գործ ունենք Աստծուց հեռացած եւ իր կյանքն աշխարհային հոգսերով ծանրաբեռնած մի դատավորի հետ։

Եւ ահա այս նույն քաղաքում այրի մի կին կա, որ անընդհատ եւ առանց վհատվելու գալիս է այս դատավորի մոտ իր դատի համար։ Ի տարբերություն դատավորի նկարագրության՝ Ավետարանը ոչինչ չի ասում այրի կնոջ մասին։ Մենք անգամ չգիտենք, թե նրա խնդրանքն

արդարացի՞ էր, թե՞ ոչ, բարեպաշտ կյանքով էր ապրում, թե՞ մեղսալի։ Պետք է նկատի ունենալ, որ այրիներն Իսրայելում ամենացածր սոցիալական կարգավիճակն ունեին, մեծ մասամբ անգործ էին, գումար չէին վաստակում եւ ազգականների խնամակալության տակ էին։ Բայց Օրենքը նաեւ պահանջում էր չնեղացնել այրիներին եւ նրանց մասին հոգ տանել։ Քանի որ այս դատավորը հոգնել էր այրի կնոջ այցերից, խախտվել էր իր կյանքի հարմարավետությունը, որոշում է նրա դատն անել։ Առակը վերջանում է Տիրոջ հետեւյալ խոսքով. «Իսկ Աստված արդարություն չի՞ անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր-ցերեկ աղաղակում են, եւ նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի։ Այո՛, ասում եմ ձեզ, նրանց հանդեպ իսկույն արդարություն կանի. իսկ երբ Մարդու Որդին գա, արդյո՞ք երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. ԺԸ. 7–8)։ Այրի կնոջ կերպարում բացահայտվում է մշտամնա աղոթող եւ համբերատար մարդը, որ չնայած կյանքի դժվարություններին ու խոչընդոտներին՝ չի վհատվում եւ շարունակում է պայքարել, իր իրավունքները պաշտպանել։

Տիրոջ պատմած այս առակը քրիստոնյաներիս եւս մեկ անգամ ցույց է տալիս աղոթքի մեջ հարատեւության եւ ամեն ժամ աղոթելու կարեւորությունն ու անհրաժեշտությունը։ Բոլորս էլ աղոթում ենք երբեմն մեր խոսքերով, երբեմն կանոնական կամ Եկեղեցու հայրերի բառերով, մեր սիրտը բացում Արարչի առաջ եւ անկեղծ զրուցում Նրա հետ։ Շատերիս ցանկությունն է, որ Աստված հնարավորինս արագ մեզ լսի եւ իրականություն դարձնի մեր ուզածը, խնդրանքներն ու ակնկալությունները։ Աղոթող մարդիկ, կարող է, այնպիսի տպավորություն ունենան, թե Աստված մի տեսակ դանդաղում է, չի ցանկանում իրենց աղոթքի ձայնը լսել։ Ուստի մարդկությանը մշտապես հուզել է այս հարցը. մի՞թե դժվար է Աստծու համար մեր խնդրանքները լսել եւ հնարավորինս արագ կատարել... Քանի որ Հոբի նման ծով համբերություն չունենք եւ ազգային խառնվածքով էլ անհամբեր ենք, սկսում ենք տրտմել եւ հուսահատվել։ Իսկ տրտմության դեւը մեզ կարող է հեռացնել Աստծուց եւ այլ մեղքերի մեջ գցել։ Պատահական չէ, որ վանական միջավայրերում մեծ ուշադրություն էր դարձվում միայնակյացի հոգեվիճակին, որ հանկարծ տրտմությունը նրան չշեղի իր հոգեւոր բուն առաքելությունից։ Բայց եկեք այլ տեսանկյունից նայենք այս ամենին. Աստված ոչ թե չի լսում մեր աղոթքի ձայնը, այլ դեռ ժամանակը չէ խնդրանքն ու աղերսն իրականություն դարձնելու։ Գուցե այս պահին մեր խնդրանքի իրականացումը վնասի

հենց մեզ։ Սա է պատճառը, սիրելինե՛ր, որ աղոթքներում միշտ հայցում ենք Տիրոջ կամքը եւ ոչ թե մերը, քանզի համոզված ենք, որ այն բարին եւ օգտակարն է մեր հոգեւոր շինության եւ զորացման համար։

Հետաքրքիր է՝ Աստված այս կյանքում մեզ տարբեր ձեւերով խրատում է եւ ճշմարիտ ճանապարհը ցույց տալիս, բայց շատերս շարունակում ենք մեր հին ընթացքը, երբեմն մոռանում ենք Աստծու պատվիրանների, պատգամների եւ արարչաստեղծ լինելու մասին, քանզի դժվար է այդպես ապրելը։ Ուզում ենք ամեն ինչ անել, փորձել այս կյանքում, ճաշակել զանազան մեղքերի «քաղցրությունը», բայց շարունակել մնալ Աստծու սիրո մեջ եւ չշարժել Նրա զայրույթը։ Երբ մենք դիմում ենք Աստծուն, ցանկանում ենք, որ նույն Աստված անմիջապես մեր խնդիրները լուծի եւ արագ արձագանքի։ Այդ ժամանակ շատերս հուսահատվում ենք եւ հիասթափվում՝ չհասկանալով Աստծու գործելու եղանակների մասին։ Սակայն շարունակում ենք ամեն անգամ ինչ-որ բան խնդրել Տիրոջից ուրիշների կամ մեզ համար՝ խորությամբ հասկանալով մեր անօգնականությունը։ Իսկ երբ մեր կյանքը բնականոն ընթացքի մեջ է, կարծես թե խնդիրներ չունենք, մեզանից շատերը մոռանում են Աստծու մասին։

Տեսեք՝ կարող է ամբողջ կյանքում անբուժելի հիվանդություն ունենանք եւ չկարողանանք ապրել լիարժեք կյանքով։ Առաջին հայացքից սա տառապանք է ոչ միայն հիվանդի, այլեւ նրա հարազատների եւ մտերիմների համար։ Բայց այս նույն հիվանդությունը հաճախ դառնում է հենց օրհնություն տվյալ մարդու համար, քանզի նա սկսում է հասկանալ ուրիշների ցավը, տառապանքը եւ այլափոխվում, ավելի կարեկից եւ բարի է դառնում։ Նման փորձությունների ժամանակ սկսում ենք գնահատել մեր ունեցածը, գոհություն հայտնել Աստծուն ամեն ինչի համար եւ հասկանալ, որ Աստված մեզ չի լքել, եւ Նրա նախախնամությունն անսահման է։ Այսօրվա առակի միջոցով Քրիստոս հենց մեզ հետ է խոսում եւ նորից հորդորում երբեք չհուսահատվել, հարատեւել աղոթքի մեջ, այլ խոսքով՝ աղոթելը դարձնել կենսակերպ։ Այրի կնոջ պահվածքն ապացուցում է, որ երբ համբերատար եւ հարատեւ լինենք մեր խնդրանքներում եւ աղոթքներում, Աստված էլ ժամանակին նաեւ մարդկանց միջոցով կպատասխանի դրանց՝ բժշկելով մեզ հիվանդություններից եւ ախտերից։ Ուրեմն մեզ անհրաժեշտ են կայունություն եւ հարատեւություն աղոթքի մեջ ու աներեր հավատ՝ հաղթահարելու համար բոլոր փորձություններն ու դժվարությունները։ Հավատով շաղախված անդադար աղոթքը հրաշքներ

կարող է գործել ամենքիս կյանքում՝ դառնալով աստվածմերձության աղբյուր։ Ուստի այս երկու առաքինությունները կարեւոր են մեր կյանքի համար եւ հատկապես՝ Մեծ պահքի այս ճանապարհորդության ընթացքում, երբ պայքարի ենք դուրս եկել մեղքերի դեմ՝ հոգով զորանալու եւ Տիրոջը մոտենալու համար։

Այո՛, ուզում ենք ազատագրվել մեղքերից եւ մեր կյանքի ընթացքը փոխել, բայց եկեք հայցենք Տիրոջ կամքը, որ Աստված մեզ հնարավորություն եւ ուժ տա՝ ապաշխարության ճանապարհը բռնելու եւ մեր միջից հին մարդուն թոթափելու։ Երբեք չմոռանանք աղոթքով զորանալու եւ նույն աղոթքի մեջ հարատեւ լինելու մասին։ Այսօր այս վանքից դուրս պետք է գանք հաստատ այն համոզմամբ ու վճռականությամբ, որ մեր նախնիների հետեւողությամբ աղոթքը դարձնելու ենք մեր էության անբաժանելի մասնիկը։ Ինչպես շնչում եւ արտաշնչում ենք, այնպես էլ պետք է ամեն ժամ աղոթենք եւ չձանձրանանք։

Տեսեք՝ ազգովի հպարտանում ենք Առաքելական մեր Եկեղեցու հայրերով եւ մասնավորապես Ս. Գրիգոր Նարեկացիով, որին բազմամիլիոնանոց Կաթոլիկ Եկեղեցին «Տիեզերական վարդապետ» հռչակեց։ Իսկ նրա ապրած կյանքի գաղտնիքը շատ պարզ էր՝ Նարեկացին աղոթում էր... Աղոթենք մեր երկրի խաղաղության, հայոց բանակի զորացման, մեր առաջնորդների եւ ընտանիքների համար, զորանանք աղոթքով եւ այսօրվա ավետարանական ընթերցվածի՝ այրի կնոջ օրինակով հարատեւենք աղոթքի մեջ։

«Մշտապես ուրա՛խ եղեք, անդադար աղոթե՛ք, ամեն ինչում գոհությո՛ւն հայտնեք, որովհետեւ դա է Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով ձեզ համար» (Ա. Թես. Ե. 16)։